111 էջում գրել է ՉԺԶ (716+551=1267) թվականի տակ, իսկ Ս. Ջալալյանցից վերցնելով՝ 155 էջում նույն արձանագրությունը գրել է ՉԾԶ—1307 թվականի տակ։

Աշտարակ գյուղի Կարմրավոր եկեղեցու պարսպի մուտքի գլխի արձանագրությունը գրքի մեջ զետեղված է երեք անգամ. երկու անգամ 162 էջում՝ 1325 և 1326 թվականների տակ, մի անգամ էլ 99 էջում՝ ՉԴ (1255) թվականի տակ։

Դրան հակառակ, երբեմն էլ երկու տարբեր արձանագրություններ միացրել և իբրև մեկն է հրատարակել։ Օրինակ՝ 170 էջում Հաղբատի երկու տարբեր տապանագրեր հրատարակել է իբրև մեկը։ Այդ արձանագրությունները նա վերցրել է Ռոստոմ-Բեկ Երզնկյանից, որի մոտ սխալ չկա։

Հաղբատի մի արձանագրության մասին Ջալալյանցը միայն ակնարկ է անում՝ առանց նրա բնագիրը բերելու։ Կոստանյանցն այդ ակնարկը մեջ է բերել իր գրքի 184 էջում իբրև արձանագրություն։

Այսքանն էլ բավական է համոզվելու համար, որ Կ. Կոստանյանցի վիմական տարեգիրը, նույնիսկ ճշտության այն սահմաններում, ինչ սահմաններում արձանագրությունները հրատարակված են եղել ավելի առաջ, նրանց մասին լրիվ պատկերացում չի տալիս, որովհետև հրատարակված արձանագրությունների մի մասը դուրս է մնացել, բնագրերը աղավաղվել են և հաճախ կրճատվել։

Սանահնի արձանագրություններից մի քանիսը օգտագործվել են գիտական ուսումնասիրությունների մեջ։ Այդ ուսումնասիրություններն ամեն դեպքում չենք նշել, որովհետև նրանց վերծանությունը, մեծ մասամբ, ինքնուրույն չէ։ Այդ բնույթի գրականությունը մենք նշել ենք միայն այն դեպքերում, երբ որևէ նոր մեկնություն կամ եզրակացություն են պարունակում իրենց մեջ և արձանագրության բովանդակությունը հասկանալուն որևէ կերպով օժանդակում են։

* * *

Ինչպես պարզվեց, վերևում հիշատակած ժողովածուները բոլորն էլ շատ հեռու են գիտական լինելուց։

Այժմ արձանագրություն հրատարակողից պահանջվում է.

1. Հավաքել բոլոր արձանագրություններն անխտիր, առանց որևէ գիր իսկ բաց թողնելու, որպեսզի օգտագործողը վստահ լինի, որ տեղում դրանից ավելի բան չկա։

2. Արձանագրությունները ներկայացնել ճիշտ այնպես, ինչպես որ նրանք կան, առանց մի տառ ավելացնելու կամ պակասեցնելու և, որ գլխավորն է, հնագրական ու գծագրական առանձնահատուկ կողմերը վերարտադրել հարազատորեն։

3. Ստուգման համար տալ նաև արձանագրության լուսանկարը։

4. Մեկնաբանել արձանագրությունն այնպես, ինչպես հասկանում է հրատարակողն ինքը։ Դրա համար անհրաժեշտ է երկրորդ անգամ շարադրել արձանագրության բովանդակությունն այժմյան բառանշատման ու կետադրության կանոններով, ջնջված բառերի լրացումներով, անհասկանալի բառերի, դարձվածքների մեկնություններով և անհրաժեշտ ծանոթագրություններով։

5. Նշել արձանագրության վերաբերող գրականությունը, ցույց տալ ուրիշների վերծանության տարբերությունները և հիմնավորել իրենի ճշտությունը։

Այս սկզբունքներով ենք առաջնորդվել սույն ժողովածուն կազմելիս. սակայն միայն տեխնիկական պատճառներով արձանագրությունների մի մասը լուսանկարներ չունեցան, դրանք մեծ մասամբ այն արձանագրություններն են, որոնք փորագրված են շենքերի մութ անկյուններում կամ բարձրադիր, առանց հարմարանքի լուսանկարելու համար անհարմար տեղում և կամ կազմված են մեկ-երկու բառից և ունեն հասկանալի բովանդակություն ու պարզ գծագրություն։

Տարընթերցման բաժնում նշել ենք մեր և ուրիշների վերծանության միայն կարևոր տարբերությունները, որոնք փոխում են բովանդակությունը, միտքը, աշխարհագրական կամ անձի անունը, դեմքը, ժամանակը և այլն։ Բոլորովին չենք նշել ուրիշ վերծանողների կատարած լեզվական խմբագրությունները, ոչ թե այն պատճառով, որ դա մենք կարևոր չենք համարել, այլ այն պատճառով, որ անցյալում արձանագրությունների լեզուն ուղղելն ու գրաբարին հարմարեցնելն ընդ-